Հաշվետվություն

2018 թվականի հուլիսի 14-21-ը ԱՄՆ (Նյու Յորք և Վաշինգտոն)

գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, Ազգանունը***

Արարատ Միրզոյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

ՀՀ առաջին փոխվարչապետ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Նյու Յորք՝ 2018թ. հուլիսի 14-17-ը, Վաշինգտոն՝ հուլիսի 18-21-ը

4. ***Գործուղման նպատակը***

ՄԱԿ-ի կայուն զարգացման հարցերով բարձրաստիճան քաղաքական ֆորումին մասնակցելու և ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյաների հետ երկկողմ հանդիպումներ ունենալու նպատակով:

5. ***Հանդիպումները, քննարկված հարցերը, ձեռք բերված պայմանավորվածությունները***

Հուլիսի 15-ին հայկական պատվիրակությունը մասնակցել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) կողմից կազմակերպած ընդունելությանը: Ընդունելության ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանում հեղափոխության արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները, տնտեսության ոլորտում կառավարության առաջնահերթությունները, անդրադարձել եմ կոռուպցիայի դեմ պայքարին և բիզնես միջավայրի բարելավմանը միտված քայլերին:

ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Բ. Տեր-Գրիգորյանը և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Հ. Արշակյանը

ներկայացրել են համապատասխանաբար Հայաստան – Սփյուռք հարաբերությունների և Հայաստանում նոր տեխնոլոգիաների զարգացման վերաբերյալ շնորհանդեսներ:

Հուլիսի 16-ին տեղի է ունեցել հանդիպում Հայաստանի մանուկներ հիմնադրամի հիմնադիր և նախագահ Գարո Արմենի հետ: Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ համագործակցության նոր հնարավորությունները: Քննարկել ենք հիմնադրամի ջանքերով Լոռիում կառուցված Սմարթ կենտրոնի գործունեությունը, կարևորվել է նոր նմանատիպ կենտրոնների հիմնադրումը Հայաստանի Հանրապետության այլ մարզերում: Որպես գործակցության նոր և հեռանկարային ոլորտ ուղենշվել է դեղագործությունը:

Հուլիսի 17-ին տեղի է ունեցել ՄԱԿ-ի կայուն զարգացման հարցերով բարձրաստիճան քաղաքական ֆորումը, որտեղ ներկայացրել եմ Կայուն զարգացման օրակարգի և դրանից բխող նպատակների և թիրախների իրականացման առաջընթացն ամփոփոխ Հայաստանի առաջին ազգային կամավոր զեկույցը: Հանդես եմ եկել ելույթով՝ ներկայացնելով Հայաստանում թավշյա հեղափոխության արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները, ՀՀ նոր կառավարության առաջնահերթությունները և ջանքերը՝ զեկույցում արտացոլված Հայաստանի հանձնառությունները կայուն զարգացման նպատակներին հասնելու ուղղությամբ: Ելույթից հետո տեղի է ունեցել հարցուպատասխան, որի ընթացքում ուղղվել են հարցեր Հունաստանի, Բելառուսի, Լիբանանի, Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից:

Ֆորումի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Հակոբ Արշակյանը, սփյուռքի նախարարի տեղակալ Բաբկեն Տեր Գրիգորյանը մասնակցել են երկու հարակից բարձր մակարդակի քննարկումների՝ նվիրված Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում ջանքերին և կայուն զարգացման նպատակների իրականացման շրջանակներում արվող նորարարություններին:

Նույն օրը հանդիպում եմ ունեցել ՄԱԶԾ ղեկավար Աքիմ Շտայների հետ: Քննարկել ենք կառավարության բարեփոխումների ծրագրին և դրան միջազգային հնարավոր

աջակցությանը վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում կայանալիք արտահերթ ընտրություններին ՄԱԶԾ կողմից հնարավոր օժանդակությանը:

Հուլիսի 18-ին տեղի են ունեցել հանդիպումներ հետևյալ պաշտոնյաների հետ.

1. ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Վ. Միթչել
2. ԱՄՆ-ի Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի առաջնորդներ Դեյվիդ Թրոթ, Ֆրենք Փալոն, Դեվիդ Վալադաո
3. Կոնգրեսի "House Democracy Parnership" նախագահ, կոնգրեսական Դ.Ռոսկամ, փոխնախագահ, կոնգրեսական Դ.Փրայս
4. Կոնգրեսական Բրիան Մասթ
5. Սենատոր Քրիս Վան Հոլլեն
6. "Freedom House" նախագահ Մ.Աբրամովից, փոխնախագահ Լ.Դիկիսոն

Վերոնշյալ հանդիպումների ընթացքում հայ-ամերիկյան համագործակցության խորացման, առևտրային կապերի աշխուժացման, ներդրումների ներգրավման, ինչպես նաև Հայաստանին հատկացվող ամերիկյան աջակցության ծավալների մեծացման հետ կապված հարցեր:

Հուլիսի 19-ին ելույթով հանդես եմ եկել Վաշինգտոնի Կարնեգի հաստատությունում, ուր ներկա էին ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի և պետքարտուղարության պաշտոնյաներ, առաջատար վերլուծաբաններ, դիվանագետներ: Ելույթում անդրադարձա Հայաստանում թավշյա հեղափոխության արդյունքում տեղի ունեցած փոփոխություններին, ՀՀ կառավարության առաջնահերթություններին և ձեռնարկվելիք բարեփոխումներին: Ելույթին հաջորդեց հարցուպատասխան: Հարցերը բազմաոլորտ էին՝ սկսած երկրում իրականացվող բարեփոխումներից մինչև Արցախյան հիմնահարցի կարգավորում և հայ-թուրքական հարաբերություններ:

Տեղի ունեցավ նաև հանդիպում IRI նախագահ Դ.Թվինինգի հետ: Քննարկման առարկա դարձան արտահերթ խորհրդարանական ընտրություններն ու այդ հարցում IRI տեխնիկական աջակցությունը:

Տեղի ունեցան հանդիպումներ Ամերիկայի հայ ազգային կոմիտեի գործադիր տնօրեն Ա.Համպարյանի և Ամերիկայի հայկական համագումարի ղեկավարության հետ (հուլիսի 20): Վաշինգտոնում ՀՀ դեսպանությունում տեղի ունեցավ նաև ընդունելություն և հանդիպում հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկեցինք Հայաստան-Սփյուռք համագործակցությանը, Հայաստան-ԱՄՆ կապերի զարգացմանն ու խորացմանը վերաբերող հարցեր:

Գործուղվող՝

Առաջին փոխվարչապետ Ա.Միրզոյան

Ստորագրություն, ամսաթիվ 24.07.2018թ.